Նաիրի Ինշուրանս
Ապահովագրական ընկերություն

Հարգելի հաճախորդ,

Ուրախ ենք Ձեզ ողջունել «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ում:

Մեր Ընկերության նպատակներից մեկն է մշտապես ապահովել հաճախորդների սպասարկման բարձրակարգ որակը: Մենք բոլորս գիտակցում ենք, որ առողջության հետ կապված խնդիրները և դրանց անցանկալի հետևանքներն անխուսափելի են մարդկանց կյանքում: Նման խնդիրներից առաջացող ֆինանսական վնասները լուծելու նպատակով Ձեր գործատուն աջակցել է և կազմակերպել է իր աշխատակիցների բժշկական ապահովագրության գործընթացը:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից տրամադրվող ապահովագրական ծառայությունները և մասնագիտացված անձնակազմը կտրամադրի Ձեզ ապահովագրական ծառայությունների բարձրակարգ և որակյալ պասարկում:

+374 98 277 288 **+374 98 277 283**

Նաիրի Ինշուրանս
Ապահովագրական ընկերություն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրված անձի կողմից զանգ Ապահովագրողին

Հեռախոսազրույց Բժիշկ-փորձագետի հետ

Անհրաժեշտ բժշկական ծառայությունների համաձայնեցում

Ապահովագրողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ստացում

Հատուցման գումարի տրամադրում

Ապահովագրված անձը կարող է՝

- **ՏԱՐԲԵՐԱԿ** 1. Դիմել «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի հետ համագործակցող բուժհաստատություն, որի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է բուժհաստատությանը՝ ազատելով ապահովագրված անձին վճարումներ կատարելու պարտականությունից:

- **ՏԱՐԲԵՐԱԿ** 2. Դիմել «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի հետ համագործակցության պայմանագիր չունեցող բուժհաստատությանը և ստանալով բուժօգնություն, եռամսյա ժամկետում, կատարած վճարումները փաստող դրամարկղային կտրոնները և (կամ) սահմանված ձևի հաշիվները, ստացած ծառայությունների ցանկը, բժշկի եզրակացրած ախտորոշումը (էպիկրիզ) անհրաժեշտ է ներկայացնել «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ին և լրացնել Ապահովագրողի կողմից սահմանված ձևի դիմում՝ ծախսերի հատուցման նպատակով: Ապահովագրական հատուցումը փոխանցվում է Ապահովագրված անձի անձնական հաշվեհամարին, կամ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի տարանցիկ հաշվին /նշված փաստաթղթերը Ապահովագրված անձը կարող է ներկայացնել առանց գրասենյակ այցելելու՝ **WhatsApp** կամ **Viber** բջջային հավելվածների միջոցով:

- Ապահովագրական պահանջի կարգավորման դրական եզրակացության դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

- Ապահովագրական պահանջի մերժման դեպքում համապատասխան եզրակացությունը կազմվում և Ապահովագրված անձին է տրամադրվում /ուղարկվում/ ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալու պահից 5-օրյա ժամկետում և այն կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նաիրի Ինշուրանս
Ապահովագրական ընկերություն

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ և ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական պատահար են համարվում և Ապահովագրողի կողմից 100% հատուցվում են հետևյալ դեպքերը և բժշկական ծախսերը՝

1. ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

(Իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում)

1.1 Ֆլյուորոգրաֆիա և թերապևտի զննում

2. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

(Իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում)

2.1 PAP թեստ 35-ից բարձր տարիքի կանանց համար
2.2 Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում մամոգրաֆիական հետազոտություն 35-ից բարձր տարիքի կանանց համար
2.3 PSA թեստ 45-ից բարձր տարիքի տղամարդկանց համար
2.4 Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն
2.5 Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ),
2.6 Տեսողության ստուգում
2.7 Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով
2.8 Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուռոլոգի խորհրդատվություն
2.9 Թերապևտի խորհրդատվություն

3. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Շտապօգնության խմբի այց, այդ թվում՝ մասնագիտացված,
3.2. Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում
3.3. Անհետաձգելի բուժման դեղորայքի ապահովում

4. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Թերապևտի և նեղ-մասնագետների խորհրդատվություն, բուժման նշանակում
4.2. Թերապևտիկ և վիրաբուժական հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում
4.3. Լաբորատոր ախտորոշում՝ ըստ բժշկի նշանակման
4.4. Գործիքային ախտորոշում՝ ըստ բժշկի նշանակման

5. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

5.1 Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում և բուժում
5.2 Թերապևտիկ և վիրաբուժական հիվանդությունների բուժում
5.3 Ստացիոնար պայմաններում բուժում պահանջող հիվանդությունների բուժում (այրվածք, վնասվածք, թունավորու մ և այլն)

5.4 Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում
5.5 Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում: Անգիոգրաֆիկ հետազոտությունները, այդ թվում՝ կորոնարոգրաֆիա հետազոտության ,հատուցում նույնիսկ այն դեպքում, երբ այդ հետազոտությանը չի հաջորդում ծրագրով նախատեսված վիրահատական միջամտություն
5.6 Վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների հատուցում
5.7 Սրտանոթային վիրահատություններ և միջամտություններ.
5.7.1 Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով)
5.7.2 Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով
5.7.3 Աորտակորոնար շունտավորում
5.7.4 Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում)
5.7.5 Բարձր հաճախականության էլեկտրոաբլացիա
5.7.6 Աորտայի պրոթեզավորում (քրոնիկ պլանային դեպքերում՝ աորտայի անևրիզմա)
5.8 Անոթային և նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ
5.9 Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում
5.10 Անհատական հիվանդասենյակի արժեքի հատուցում օրական 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ անկախ օրերի քանակից

6. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

6.1 Ամբուլատոր բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության սրացման անսահմանափակ քանակի բուժում
6.2 Ստացիոնար բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության անսահմանակ սրացում
6.3 Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն

7. ՀՂԻՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ*

7.1 Պետական ծրագրից դուրս հղիության հսկողություն
7.2 Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում (այն դեպքում, երբ պաթոլոգիան սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կամ քրոնիկ հիվանդությունների արդյունք չէ)
7.3 Հղիության ընդհատում՝ բժշկական ցուցումներով
7.4 Հետծննդյան շրջանում հիվանդասենյակում կացության ծախսերի հատուցում՝ առավելագույնը 10 (տասը) օր՝ օրական 10,000 (տասը հազար) ՀՀ դրամի սահմաններում

*** Ծածկույթն ուժի մեջ է մտնում առանց սպասման ժամկետի: Հատուցման ենթակա են հիվանդանոցներում հարմարավետ հիվանդասենյակների և անհատական խնամքի համար սահմանված վճարները մինչև 80,000 ՀՀ դրամ: Հատուցման ենթակա է հղիության ընթացքում պրոֆիլակտիկ նպատակներով նշանակված դեղորայքի և պատրաստուկների արժեքը:**

8. ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

8.1 Ախտորոշում
8.2 Աչքի տարատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով

9. ԴԵՂՈՐԱՅՔ

9.1 Նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում
9.2 Համագործակցող դեղատներից նշանակված դեղորայքը անվճար/ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն

10. ՊԼԱՆԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

10.1. Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն

11. ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԾԿՈՒՅԹ

11.1 Բարդ դեպքերում՝ երկրորդ կարծիք ոլորտի առաջատար մասնագետների խորհրդատվությամբ. եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի եզրակացության հետ, նա կարող է իր հաշվին անցնել 2-րդ հետազոտությունը: Եթե, արդյունքում, եզրակացությունները էապես տարբերվում են, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անցնել 3-րդ հետազոտությունը (տվյալ ոլորտում առաջատար մասնագետի մոտ), որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: Եթե 3-րդ կարծիքն էապես տարբերվում է 1-ին մասնագետի տրամադրած եզրակացությունից Ապահովագրողը հատուցում է 2-րդ կարծիքի հետ կապված ծախսերը, հակառակ դեպքում այն հատուցման ենթակա չէ:

12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

12.1 Շուրջօրյա բժշկական խորհրդատվություն,
12.2 Անհրաժեշտ բժշկական ծառայությունների մատուցման կազմակերպում,
12.3 Ախտորոշիչ հետազոտությունների և բուժման լավագույն տարբերակների մշակում,
12.4 Խորհրդատվություն բժշկական հաստատությունների և մասնագետների ընտրության հարցում,
12.5 Բժշկական սպասարկման հնարավոր լավագույն պայմանների երաշխավորում,
12.6 Պայմանագրով սահմանված բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց հաշիվների ստացում և վճարումների իրականացում: Մատուցվող բժշկական ծառայությունների որակի, արդյունավետության և համարժեքության անընդհատ հսկողության ապահովում,
12.7 Ամենամյա կանխարգելիչ բժշկական զննումների անցկացում, դրանց արդյունքում հիվանդությունների վաղ հայտնաբերում, բուժում և հնարավոր բարդությունների կանխարգելում,
12.8 Ապահովագրական գումար՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար որպես ապահովագրական գումար է սահմանվում է 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամը:
12.9 Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ չի կիրառվում:
12.10 Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում:

13. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն.

13.1 Մինչ ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն

13.2 Ապահովագրական պատահարները, որոնց տեղի ունենալու մասին Ապահովագրված անձը (նրա օրինական ներկայացուցիչը) չի հայտնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատահարի մասին հայտնելն անհնար է եղել: Վերջին դեպքում Ապահովագրված անձը պետք է դա իրականացնի առաջին իսկ հնարավորության դեպքում

13.3 Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

13.4 Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը

13.5 Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները

13.6 Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ

13.7 Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ

13.8 ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ

13.9 Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքները

13.10 Տուբերկուլյոզ

13.11 Հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, քրոնիկ երիկամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ

13.12 Շաքարային դիաբետ և դրա բարդությունները, այդ թվում դրա բացահայտման համար նախատեսված հետազոտությունները

13.13 Չարորակ ուռուցքային հիվանդությունների ոչ վիրահատական բուժում

13.14 Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ, այդ թվում՝ պոչուկի էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները (բուժում և հետազոտություններ, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություններ)

13.15 Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում, այդ թվում նշված հիվանդությունների/շեղումների բացահայտմանն ուղղված հետազոտությունները

13.16 Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում

13.17 Բուժխնամք, բժշկի տնային կանչ

13.18 Հիվանդությունների պլանային և պահպանողական բուժում, բացառությամբ «Պլանային վիրաբուժություն» և «Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում» ծառայություններով նախատեսված դեպքերի

13.19 Քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ

13.20 Բացիլակրության, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը

13.21 Վերականգնողական բուժում, ֆիզիոթերապիա, լազերաթերապիա, կինեզոթերապիա, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, էներգաինֆորմատիկա, ցուբոթերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն

13.22 Վիտամինաթերապիա, բացառությամբ «Հղիություն և ծննդօգնություն» ծառայության, կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր,

13.23 Այն ծառայությունները, որոնք մատուցվում են կանխարգելիչ և առողջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն

13.24 Էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա

13.25 Էնդոպրոթեզավորում, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, երբ այլ ընտրանքային բուժում չկա, օրգանների փոխպատվաստում

13.26 Պրոթեզներ, իմպլանտներ, հարմարանքներ (օպտիկական ապակիներ, լինզաներ, շրջանակներ, լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ, այդ թվում՝ օրթոպեդիկ բարձ, օրթոպեդիկ ներքնակ, օրթոպեդիկ ներդիր, տակդիր, և այլն), բժշկական պարագաներ,

13.27 Սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում, սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում

13.28 Պլաստիկ և կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, մաշկի հիվանդությունների (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ

13.29 Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)

13.30 Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետաանոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-նևրոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ

13.31 Քաշի և խոսքի շտկում, տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, սեռի վիրաբուժական փոփոխում

13.32 Ատամնաբուժություն

13.33 Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում

13.34 Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք

14. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1 Պայմանագրի ներքո կարող են ապահովագրվել միայն Ապահովադրի աշխատողները և Պայմանագրով ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամները՝ մինչև 65 տարեկան ամուսին/կին, մինչև 18 տարեկան զավակ, ընդ որում ընտանիքի անդամները կարող են ապահովագրվել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Ընտանիքի անդամների համար գործում են հետևյալ ապահովագրավճարները՝

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ
0-17	45,000 ՀՀ դրամ
18-40	90,000 ՀՀ դրամ
41-65	180,000 ՀՀ դրամ

14.2 Ապահովագրական գումար՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար որպես ապահովագրական գումար է սահմանվում է 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամը:
14.3 Ոչ պայմանական չփոխհատուցվող գումար՝ չի կիրառվում:
14.4 Ապահովագրված անձ-աշխատողների նկատմամբ տարիքային սահմանափակում չի կիրառվում:
14.5 Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:
14.6 Նշանակված դեղորայքը կամ ախտորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են ծրագրում:

Նաիրի Ինշուրանս
Ապահովագրական ընկերություն

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

	Բժշկական հաստատության անվանում	Հասցե, ք.Երևան
1	«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տիտոգրադյան 14
2	«Էլիտ Մեդ Բժշկական կենտրոն» ՍՊԸ	Հակոբ Հակոբյան փող., 3/15
3	«Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Պարոնյան 21
4	«Աստղիկ» ԲԿ	Դանիել Վարուժան 28 ա
5	«Սիր-Մեդ» ԲԿ	Բյուզանդ 7-10
6	«Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» ՓԲԸ	Հրաչյա Ներսիսյան 7
7	«Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲԸ	Մանանդյան 9
8	«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ	Արտաշիսյան 46ա
9	«Իզմիրլյան» ԲԿ ՓԲԸ	Ահարոնյան 6
10	«Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ	Մարգարյան 6
11	«Պերինատոլոգիայի, Մանկաբարձության Եվ Գինեկոլոգիայի Ինստիտուտ» ԲԲԸ	Մարգարյան 6/2
12	«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն»	Ֆանարջյան 76
13	«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ	Աբովյան 60
14	«ՇԵՆԳԱՎԻԹ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	Մանանդյան 9
15	«Դիագնոստիկա բժշկական միավորում» ԲԲԸ	Մարգարյան 6/1
16	«Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն»	Մաշտոցի 22
17	«Արաբկիր բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ»	Մամիկոնյանց 30
18	«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ	Էզրաս Հասրաթյան 9
19	«Ուլտրահիմիջինգ ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոն»	Մոսկովյան 13
20	«Հայ-Ամերիկյան առողջության կենտրոն հիմնադրամ»	Մխիթար Հերացու 5
21	«Նորք-Մարաշ Բժշկական Կենտրոն» ՓԲԸ	Արմենակյան 13
22	«Պրոմ տեստ» ախտորոշիչ լաբորատորիա	Եզնիկ Կողբացու փող., 28 շենք, Զորափի փող., 4/3 շենք, շ. 1, Կոմիտասի պող., 58/12 շենք
23	«Մաշկաբանության և սեռավարակների գիտաբժշկական կենտրոն» ՓԲԸ	Ֆուչիկի 32
24	«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ	Նոր Արեշ, 22-րդ փողոց, 63/1 շենք
25	«Սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ	Պարոսյր Սևակի փող., 5 շենք
26	«Մեփլ լիֆս» հայ կանադական բժշկական կենտրոն	Արմենակ Արմենակյան փող., 129 շենք
27	«Ժամանակակից վիրաբուժության կլինիկա»	Դավիթ Անհաղթի փող., 13/4 շենք
28	«Մեդլայն կլինիկ» ՍՊԸ	Երևան, Ռոստովյան փող., 17/1 շենք
29	«Մեդլայն» ԲԿ	Պուշկինի փող., 43 շենք, №104
30	«Դիալաբ կլինիկական» ախտորոշիչ լաբորատորիա	Մամիկոնյանց փող., 41 շենք
31	«ԿՀՄԻ ԲԱԿ - ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	Բագրատունյաց փող., 1 շենք («Երևան» ԲԿ շենքում)
32	«Տարերք-Թվայն» ՍՊԸ / Հելիոս բժշկական կենտրոն	Սայաթ Նովա 11/2
33	«ՍԼԱՎՄԵԴ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	Մարշալ Բաղրամյան պող. 3-րդ նրբ., 4/2 շ
34	«ՀԵԼԻՈՍ» Բժշկական կենտրոն	Սայաթ-Նովայի պող., 11/2 շենք
35	«ԶԻԼՖՅԱՆ ԱԶՔԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ	Վերին Անտառային փող., 160/7 շենք
36	«Վարդանանց» ՆԲԿ	Վարդանանց 18
37	Կրիոգեն բժշկական կենտրոն	Բաբայան 36
	Դեղատուն	**Հասցե, ք. Երևան**
38	«Գեդեոն Ռիխտեր» դեղատուն	http://www.richter.am
39	«Նատալի ֆարմ» դեղատուն	http://www.natalipharm.am
40	Med911.am	https://www.med911.am
	Ստոմատոլոգիական Կլինիկա	**Հասցե, ք. Երևան**
41	«Դե Լյուքս» ստոմատոլոգիական կենտրոն	Կորյուն 7, բն. 1
42	«ՆՈՐԴ ԿՍ» ստոմատոլոգիական կենտրոն	Հյուսիսային պող. 5-183
43	«Էլիտ Մեդ» ԲԿ Ստոմատոլոգիական բաժին	Մաշտոցի պողոտա 2/3
44	«Ինտելեկտ» ԱԿ	Սայաթ-Նովա 26
45	«Մեդեսի» ստոմատոլոգիական կենտրոն	Դավթաշեն, 3-րդ թաղամաս, 5/1 շենք
46	«Բիոանկոդենտ» ստոմատոլոգիական կենտրոն	Կոմիտասի պող., 49/12 շենք
47	«Իմպլանտում» ստոմատոլոգիական կենտրոն	Երևան Արշակունյաց 46/2
48	«Արտ կլասիկ դենտ» ստոմատոլոգիական կենտրոն	Մոլդովական փող., 3 շենք
49	DMC–Դեմիրճյան բժշկական կենտրոն	Դեմիրճյան 12-14/ տարածք 18
	Օպտիկա	**Հասցե, ք. Երևան**
50	Մայր օպտիկ	Գրիգոր Լուսավորչի փող., 3/76 շենք
51	Լ-օպտիկ	Զաքյան փող., 4 շենք
52	Լինզ օպտիկ	Մաշտոցի պող., 7 շենք
	Բժշկական հաստատության անվանում	**ՀՀ մարզեր, հասցե՝**
53	«Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Եղվարդ, Չարենցի 196
54	«Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Աբովյան, Հատիսի 6

55	«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Հրազդան, միկրոշրջան թաղամաս
56	«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Աշտարակ, Նարեկացու 61
57	«Սևանի հիվանդանոց» ՓԲԸ	ք. Սևան, Լճափի 31
58	«Սևանի պոլիկլինիկա» ՓԲԸ	ք. Սևան, Նաիրյան 169
59	«Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Արմավիր, Շահումյան 3
60	«Մեծամորի հիվանդանոց»	Արմավիրի մարզ, ք. Մեծամոր
61	«Աշտարակի պոլիկլինիկա»	ք. Աշտարակ, Նարեկացու 61
62	«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 7
63	«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Մասիս, Մխիթար Հերացու 1
64	«Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Թալին, Քոթանյան 1
65	«Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Արարատ, Խանջյան 59
66	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Գավառ, Ազատության 21
67	«Գավառի պոլիկլինիկա» ՊՓԲԸ	ք. Գավառ, Շահումյան 14
68	«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Մարտունի, Գետափնյա 2/17
69	«Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ	ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 34
70	«Գյումրու Գ.Գյուլբեկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց»	ք. Գյումրի, Ջիվանու 74
71	«Միջազգային Կարմիր Խաչի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	ք. Գյումրի, Անի թաղամաս, 5 փ. 8շ.
72	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 20
73	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Վանաձոր, Կարմիր բանակի 8
74	«Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	ք. Վանաձոր, Ամիրյան 10
75	«Ապարանի բժշկական կենտրոն ՓԲԸ	ք. Ապարան, Գարեգին Նժդեհի 30
76	«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Բերդ, Ալեք Մանուկյան 25
77	«Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Նոյեմբերյան,26 Կոմիսարների 1
78	«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Իջևան, Նալբանդյան 1
79	«Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ	ք. Իջևան, Երիտասարդական 2ա
80	«Դիլիջանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Դիլիջան, Սայաթ-Նովա 7
81	«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Եղեգնաձոր, Վայքի 1
82	«Վայքի բուժական միավորում» ՓԲԸ	ք. Վայք, Շահումյան 96
83	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Սիսիան, Չարենցի 14
84	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Գորիս, Տաթևացու 31
85	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Կապան, Մելիք Ստեփանյան 13
86	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ք. Քաջարան, Բակունցի 1
	Ստոմատոլոգիական Կլինիկա	**ՀՀ մարզեր, հասցե՝**
87	«ԱՐՏ-ՍՏՈՄ» ՍՊԸ	ք. Արտաշատ,Մարքսի 11ա
88	«Գյումրու թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ	ք.Գյումրի Գորկու 42
89	«Միսաք Անտոնյան Արմենի» ԱՁ	ք. Իջևան , Երևանյան 189
90	«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՍՊԸ	ք. Էջմիածին, Մովսես Խորենացի փ. 20 /ա շենք
91	«Վանմեդ» ԲՍԿ ՓԲԸ	ք. Վանաձոր, Զաքարյան 29
92	«ՕՊՏԻՄՈՒՄ ԴԵՆՏ» ՍՊԸ	ք.Վանաձոր,Տիգրան մեծի 29/19
93	«Հակոբյանների Ստոմա-Դենտ» ՍՊԸ	ք. Գյումրի Գորկու 35

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

/Տարեկան կանխարգելիչ բուժզննման համար/

	Բժշկական հաստատության անվանում	Հասցե, ք.Երևան
1	«Էլիտ Մեդ Բժշկական կենտրոն» ՍՊԸ	Հակոբ Հակոբյան փող., 3/15
2	«Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Պարոնյան 21
3	«Սիր-Մեդ» ԲԿ	Բյուզանդ 7-10
4	«Դիագնոստիկա բժշկական միավորում» ԲԲԸ	Մարգարյան 6/1
5	«Դիալաբ կլինիկական» ախտորոշիչ լաբորատորիա	Մամիկոնյանց փող., 41 շենք
6	«Մեփլ լիֆս» Հայ կանադական ԲԿ	Արմենակ Արմենակյան փող., 129 շենք
7	«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ	Աբովյան 60
8	«ՀԵԼԻՈՍ» Բժշկական կենտրոն	Սայաթ-Նովայի պող., 11/2 շենք
9	«Իզմիրլյան» ԲԿ ՓԲԸ	Ահարոնյան 6
10	«ՇԵՆԳԱՎԻԹ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	Մանանդյան 9
11	«Մեդլայն կլինիկ» ՍՊԸ	Ռոստովյան փող., 17/1 շենք
12	Կրիոգեն բժշկական կենտրոն	Բաբայան 36

Նշում: Գործընկեր բժշկական հաստատությունների ցանկը Պայմանագրի գործողության ընթացքում կարող է փոփոխվել: